ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ------ 2024թ. **N-----Ա**

ՈՐՈՇՈՒՄ
ԳՈՒՅՔԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով և Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 50-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի բյուջեի «Տրանսպորտային համակարգի արդիականացում» ծրագրով 2024 թվականին ձեռք բերված 6,300,000,000.00 (վեց միլիարդ երեք հարյուր միլիոն դրամ) 171 հատ Zhongtong bus LCK6860HGN մակնիշի ավտոբուսները սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերությանը:

2. Երևանի քաղաքապետին՝ ապահովել «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության հետ նվիրատվության պայմանագրի և հանձնման-ընդունման ակտի կնքումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՈՒՅՔԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման ընդունումը պայմանավորված է այն հանգամանքով, որ մայրաքաղաքի բնակչության կանոնավոր տրանսպորտային սպասարկումն ապահովելու համար նոր ներկրված թվով 171 հատ Zhongtong bus LCK6860HGN մակնիշի ավտոբուսների շահագործումը նախատեսվում է հանձնել «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերությանը՝ Երևանի հանրային տրանսպորտի նոր երթուղային ցանցի ներդրման գործընթացի շրջանակներում: Նախատեսվում է քաղաքային տրանսպորտի թվով 13 ավտոբուսային երթուղիները համալրել նոր շարժակազմով և ավելացնել ավտոբուսային երթուղիների քանակը՝ միաժամանակ ավելացնելով ուղևորափոխադրումների ծավալը և ստեղծելով նոր աշխատատեղեր:

Արդյունքում հնարավորություն կստեղծվի կանոնավորելու ներհամայնքային ուղևորափոխադրումների գործընթացը, զգալիորեն բարելավելու ուղևորների սպասարկման վիճակը և որակը:

Միաժամանակ, հիշյալ ավտոբուսների մասով «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի կողմից ՀՀ կառավարություն է ներկայացվել հայտ՝ գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ ներմուծման մաքսատուրքից ազատելու վերաբերյալ, և ճանապարհային ոստիկանությունում ավտոբուսների համապատասխան հաշվառումն ու գրանցումներն իրականացվելու են կրկին «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի կողմից, ինչով էլ ծագում է հիշյալ որոշման անհրաժեշտությունը:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է ընդունել «Գույքի նվիրատվության մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ